

## ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգ

Ներկայումս ավելի են կարևորվում աշխատաշուկա մուտք գործող շրջանավարտների ոչ միայն տեսական գիտելիքները, այլև գործնական հնտություններն ու կարողությունները:

Տնտեսագիտական ֆակուլտետի 2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի կարևորագույն ուղղությունը համարում ենք ուսումնական ծրագրերի իրականացման վերջնարդյունքների ճշգրիտ կանխատեսումը: Դեկանատի, ամբիոնների համար ուղենշային է այն հարցը, թե ծրագրերի ավարտին ինչ գիտի, ինչ է հասկանում և կարողանում շրջանավարտը:

Երկաստիճան կրթական համակարգը (բակալավրիատ-մագիստրատուրա) դասախոսակենտրոն մոտեցումից ապահովում է դեպի ուսանողամետ կողմնորոշում: Դայեցակարգում նախատեսում ենք ուսանողին հնարավորինս նախապատրաստել իր ապագա մասնագիտական գործունեությանը: Մենք նախատեսում ենք շրջանավարտների, գործատուների և դասախոսների խորհրդակցությունների կազմակերպում, որոնց մասնակից պետք է դառնան ուսանողները:

Կրթական վերջնարդյունքների հաշվառումը ենթադրում է մոտեցումների փոփոխություն նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներում:

Կրթական վերջնարդյունքների մշակման մեջ նախատեսում ենք ընդգրկել տնտեսագետ մասնագետներին, գործարարներին և գործատուներին:

2011-2012 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգում վերոնշյալից բացի, գլխավոր ենք համարում հետևյալ ուղղությունները:

- Ուսանողները պետք է տիրապետեն մասնագիտական գիտելիքների հիմունքներին:
- Դասախոսները պետք է կառավարեն ուսանողի կողմից տեղեկատվություն ձեռք բերելու և վերլուծելու աշխատանքները:
- Դասապրոցեսի ընթացքում ուսանողը պետք է տրամաբանորեն և հետևողականորեն ներկայացնի յուրացված գիտելիքը, նոր տեղեկատվությունը ընկալի և մեկնաբանի համապատասխան համատեքստում
- Մագիստրատուրայի ուսանողները դասախոսի օգնությամբ պետք է տիրապետեն հետազոտության նորագույն մեթոդներին, գիտենան նորագույն տեսությունները և դրանց մեկնաբանությունները:

- Անհրաժեշտ վերջնարդյունքների նախապատրաստման գործում կարևոր ենք համարում ուսանողի պատասխանատվության ստանձնումը իր հետագա գործունեության համար:

Նախատեսված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է համախմբել ամբիոնների ուժերը, հայեցակարգում հաշվի առնել դասախոսների իրական կարողություններն ու ռեզերվները:

Դասախոսը պետք է տիրապետի ուսանողին ակտիվացնելու, գիտելիքների պահանջ գգալ տալու մեխանիզմներին:

Ամբիոնները պետք է ծրագիր մշակեն՝ ելքային բարձր արդյունքների կանխատեսման ու ձևավորման համար: Նախատեսում ենք անցկացնել որակի դասեր, նպատակ ունենալով

- ուսանողը սահմանի որակ հասկացությունը,
- իմանա որակի գործուները,
- ամբողջությամբ ծանոթ լինի որակի կառավարման տեսությանը:

Դասախոսները պետք է նոր գաղափարներ առաջ քաշեն և ուսանողներին համախմբեն դրանց շուրջ: Որակի մասին հոգածությունը դարձնել նաև ուսանողների խնդիրը:

Մագիստրատուրայի բաժնում շեշտը դրվում է կիրառական հետազոտություն կատարելու վրա: Մագիստրոսական թեզի պաշտպանությունը պետք է ցույց տա, թե ուսանողը ինչպիսի ներդրում է կատարել տվյալ թեմայի ոլորտում:

Հայեցակարգում ներառվում են մեթոդական խնդիրներ, ինչպես, ասենք, ուսանողին ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու գործում մեթոդական հիմնավոր աջակցության ցուցաբերում: Անհրաժեշտ է լայն տեղ հատկացնել տեսամեթոդներին:

Խնդիր ենք դնում պարբերաբար անցկացնել զրույցներ կլոր սեղանի շուրջ և բանավեճեր, որոնց մասնակից կդառնան փորձառու դասախոսները և ուսանողները:

Փոփոխություններ պետք է մտցնել դասախոսությունների տեսակի և անցկացման ձևերի մեջ: Դասախոսությունը պետք է ունենա հագեցված կառուցվածք, տեղեկատվության առատություն: Դասախոսը պետք է առանձնացնի առարկայի առավել կարևոր մասերը և մատուցի ուսանողներին:

Ամբիոնների ուշադրությունը հատկացվում է դասախոսությունների ակտիվ ձևի կիրառմանը.

- ❖ պրոբլեմային դասախոսություն,
- ❖ դասախոսություն՝ կոնկրետ իրավիճակների քննարկմամբ,
- ❖ դասախոսություն- երկխոսություն,
- ❖ դասախոսություն՝ այլ մեթոդների հետ համակցված:

Վերջնարդյունքների կանխորոշման ուղղությամբ խստ կարևոր է ուսանողների մեջ ինքնավերահսկման հմտությունների ձևավորումը:

Ամբիոնների առջև խնդիր է դրվում՝

- հետևել տնտեսագիտության և դրա ճյուղերի արդի փոփոխություններին, ուսումնասիրել արտասահմանյան համալսարանների համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, դրանք հաշվի առնել նորերը կազմելիս;
- ազմակերպել փորձի փախադարձ ուսումնասիրում և տարածում,
- կապեր հաստատել համապատասխան մասնագիտությունների գծով աշխարհի հայ դասախոսների հետ,
- համագործակցել իիմնականում ուսանողների և դասախոսների փոխանակման, առարկայական և ուսումնական պլանների մշակման, կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Ուսանողները պետք է ծանոթ լինեն տարբեր համալսարանների որակի մշակույթի ներկա վիճակին:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ՈւԳԸ-ի գործունեությանը, որն արդեն որոշակի տեղաշարժեր է արձանագրել: Մնում է ֆակուլտետի ամբիոնները փոխադարձ ջանքերով աջակցություն ցույց տան ՈւԳԸ-ին:

Չափազանց կարևոր են դասախոսների և ուսանողների կողմից գիտական հոդվածների նախապատրաստման հարցերը, որոնց ամբիոնները պետք է աջակցեն այն հաշվով, որ դրանք ընդգրկեն երկարաժամկետ քննարկման արդյունքում ձևավորված դիտարկումներ ու հայեցակարգեր:

Խոստովանենք, որ ֆակուլտետի բոլոր խմբերում կան հետ մնացող ուսանողներ, որոնց հետ հարկավոր է անհատական աշխատանք տանել, ունենալով պլան: Նման ուսանողների համար անհրաժեշտ են լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություն:

Ելնելով ռեսուրսային հնարավորությունից և ուսանողների թվից՝ ըստ մասնագիտությունների կազմակերպել և գործի դնել խորհրդատունների ինստիտուտը:

Ֆակուլտետի շրջանավարտը լավ մասնագետ լինելուց բացի պետք է լինի հարուստ հոգի ունեցող, իսկական մտավորական, ուստի անհրաժեշտ է նպաստել ուսանողների հոգևոր- մշակութային և գեղագիտական զարգացմանը, այս ուղղությամբ մշակել և ներդնել միջոցառումների հստակ պլան:

Մշտապես պետք է հետևել ուսանողների կողմից ներքին կարգապահական կանոնների կատարմանը:

Կրթության բնագավառի ներկա փոփոխությունները հնարավոր չեն առանց հասարակական ընկալումների: Ֆակուլտետում նախատեսվող փոփոխությունները պետք են նախապես ընկալելի լինեն ուսանողների, դասախոսների, ծնողների, գործատուների

համար: Ուստի անհրաժեշտ է նախապես տանել բացատրական աշխատանք և ուստարվա ընթացքում կազմակերպել տարբեր կարգի հավաքներ, ծնողական կոնֆերանսներ, ստուգել հասարակական ընկալումների աստիճանը: